

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

3201 Սյունիքի մարզ ք. Գորիս, Անկախության 3, հեռ. (0284)2-25-52


26 դեկտեմբեր 2016թ. N 03/06-199

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ ՎԱՇԵ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հակոբյան
Կից ուղարկվում է ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի
25-ի արտահերթ նիստում ընդունված թիվ 33-«Ա», 34-«Ն», 35-«Ն», 36-«Ն», 37-
«Ն» և 38-«Ա» որոշումները:

Առդիր՝ 38 թերթ:

ՎԱՀԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

25/12/2016

ՈՐՈՇՈՒՄ N 33-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԹԻՎ 4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի նախաձեռնությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 22-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ԼՐԱՄՇԱԿԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԵՎ ՈՐՊԵՍ <<ԱՆՀԱՅՏ>> ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Կողմ -11

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԼՈՒՆՑ ՌՈՒՍԱՍ

2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԷՐԻԿ

4. ԱՐՁԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ

5. ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ

6. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

7. ԴՈԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ

8. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

9. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

10. ՈՍԿԱՆՅԱՆ ՈՍԿԱՆ

11. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱԶԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ

2016թ. դեկտեմբեր «26»

ք.Գորիս



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

25/12/2016

ՈՐՈՇՈՒՄ N 34-Ն

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 22-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ, 70-րդ հոդվածներով,
«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով և հիմք ընդունելով
համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝
կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 5-ի
«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքում 2017 թվականի
տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 22-
Ն որոշման հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածներ 1-ի, 2-ի,
3-ի, 4-ի:

Կողմ -11

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԿԼՈՒՆՑ ՌՈՒՍՏԱՄ

2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

3. ԱՂԱԶԱՆՅԱՆ ԷՐԻԿ

4. ԱՐԶԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ

5. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ

6. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

7. ԴՈՒՆԻՅ ԴԱՎԻԹ

8. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

9. ՄԿՐՏՅԱՆ ԱՐՄԵՆ

10. ՈՍԿԱՆՅԱՆ ՈՍԿԱՆ

11. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՋԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ

2016թ. դեկտեմբեր « 26 »

ք.Գորիս

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի
ավագանու 2016 թվականի
դեկտեմբերի 25-ի N 34-Ն որոշման

**ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՏԱՐԱԾՔԻ ԳՈՏԻԱՎՈՐՈՒՄ**

N	Բնակավայր	Գոտի
1	Գորիս	I
2	Վերիշեն	II
3	Խնձորեսկ	
4	Քարահունջ	
5	Ակներ	
6	Շուռնուխ	III
7	Որոտան	
8	Բարձրավան	
9	Հարթաշեն	
10	Ներքին Խնձորեսկ	

<< Սյունիքի մարզի Գորիս համայնքում 2017 թվականի տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը

	1	2	3
1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար. հիմնական շենքերի և շինությունների համար՝			
ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար	15000	15000	15000
բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝ - 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	30000	30000	30000
501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	50000	50000	50000
1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	50000	50000	50000
3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	100000	100000	100000
գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝ - մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	3000	3000	3000
20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	5000	5000	5000
2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝			
ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության	3000	3000	3000

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության			
գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:			
3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար	5000	5000	5000
4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար	240000	100000	60000
5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, վաճառքի թույլտվության համար,	—	—	—
6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար	45000	30000	18000
7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ քսան հազար	—	—	—

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.	75000	37500	22500
9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝			
ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	6000	4000	3000
26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	7600	5100	3100
51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	9800	6600	4000
101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	15100	10100	6100
201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	18800	12600	7600
501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	33800	22500	13500
բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	6500	4500	3500
26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	7600	5100	3100
51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	9800	6600	4000
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	15100	10100	6100
201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	18800	12600	7600
501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	33800	22600	13600

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.	350	350	350
11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար.			
ա. առևտրի օբյեկտների համար	50000	25000	15000
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար	50000	30000	25000
գ. բաղնիքների (սաունաների) համար	375000	250000	150000
դ. խաղատների համար	750000	500000	300000
ե. շահումով խաղերի համար	375000	250000	150000
զ. վիճակախաղերի համար	120000	75000	45000
12) համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝			
ա. հիմնական շինությունների ներսում՝ - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	3800	2500	1500
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	4000	3000	2000
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	7600	5100	3100
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	11300	7600	4600
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	15100	10100	6100
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	22600	15100	9100
բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝ - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	1000	1000	1000
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	2000	1000	600
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	4000	2000	1200
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	8000	4000	2400
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	15000	7500	4500
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	25000	12500	7500
13) քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար. օրացույցային տարվա համար	5000	0	0

14) ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար			
ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	1500	1000	600
բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	2700	1700	1100
գ. սոցիալական գովազդի համար	0	0	0
դ. այլ արտաքին գովազդի համար	1200	750	450
ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար	300	200	120
զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար	120	80	50
15) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար	75000	50000	30000
16) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար	7500	5000	3000
17) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար	375000	250000	15000
18) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացուցային տարվա համար			
ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների	1875000	1250000	750000
բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար	3750000	2500000	1500000
գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար	5250000	3500000	2100000
դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար	7500000	5000000	3000000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքում սահմանվում է տեղական վճարների հետևյալ տեսակները և դրույքաչափերը՝

1. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 15.000 ՀՀ դրամ:

2. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 15.000 ՀՀ դրամ:

3. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 15.000 ՀՀ դրամ:

4. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10.000 ՀՀ դրամ:

5. Համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման համայնքի տարածքում տեղակայված անշարժ գույքի հասցեավորման համար մատուցված ծառայության դիմաց՝ 3.000 ՀՀ դրամ:

6. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝

ա/ մրցույթների մասնակցության համար՝ 5.000 ՀՀ դրամ:

բ/ աճուրդի մասնակցության համար՝ 10.000 ՀՀ դրամ:

7. Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝ աղբահանության վճար՝

ա/ Գորիս քաղաքում՝ ըստ հասցեի փաստացի բնակվող յուրաքանչյուր մեկ բնակչից գանձվող աղբահանության վճար՝ 150 ՀՀ դրամ:

բ/ Գյուղական բնակավայրերում՝ ըստ հասցեի փաստացի բնակվող յուրաքանչյուր մեկ բնակչից գանձվող աղբահանության վճար՝ 75 ՀՀ դրամ:

գ/ ըստ ոլորտների կենցաղային, ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբագոյացման չափաքանակներն համաձայն աղյուսակի /կցվում է հավելված 3-ի աղյուսակը/:

8. Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին՝ շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝ աղբահանության վճար՝

ա/ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 1.000 ՀՀ դրամ

բ/ ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 2.000:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ փոխհատուցման վճար՝ մեկ փաստաթղթի համար՝ 1.000 ՀՀ դրամ:

ԱՐՅՈՒՍԱԿ

Ըստ ոլորտների կենցաղային, ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբազրացման չափաքանակների

Հ/հ	Աշխատանքի նկարագրություն	Չափի միավոր	Աղբազրացման տորմա խմ/ամիս	Աղբի տեղափոխման արժեք դրամ/խմ	Միավորի արժեք դրամ/ամիս
1.	Հիվանդանոցներ	Մահճակալ	0.051	2950	150
2.	Հյուրանոցներ /հյուրատներ/, արողջարաններ	Տեղ	0.061	2950	180
3.	Նախադրժարաններ	Սան	0.016	2950	47
4.	Ուսումնական հաստատություններ	Սովորող	0.008	2950	24
5.	Մշակույթի օջախներ	Տեղ	0.013	2950	38
6.	Մթերային խանութներ	Քմ մակերես	0.025	2950	74
7.	Շուկաներ, բացօթյա արևոտի օբյեկտներ	Քմ մակերես	0.075	2950	221
8.	Շինանյութի խանութներ	Քմ մակերես	0.025	2950	74
9.	Արտադրական ապրանքների մանրածախ և մեծածախ արևոտի խանութներ, պահեստներ	Քմ մակերես	0.018	2950	53
10.	Հասարակական սննդի օբյեկտներ	Քմ մակերես	0.061	2950	180
11.	Հիմնարկներ, գրասենյակներ, բանկեր, վարկային կազմակերպություններ	Քմ մակերես	0.025	2950	74
12.	Արտադրական ձեռնարկություններ	Քմ մակերես	0.025	2950	74
13.	Բեկազգակայաններ, գազազգակայաններ	Քմ մակերես	0.011	2950	32
14.	Այլ սպասարկման օբյեկտներ	Քմ մակերես	0.011	2950	32
15.	Ջերմասեր	Զինծառայող	0.008	2950	24

Սույն աղյուսակի 6-14-րդ կետերում նշված օբյեկտների մակերեսը 550 քմ-ից ավելանալու դեպքում յուրաքանչյուր ավել 1 քմ մակերեսի համար իաշվարկը կատարվում է սահմանված արժեքի 50 տոկոսի չափով:

ՀԱՎԵԼՎԱԾ 4

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 25-ի N 34-Ն
որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ 2017
ԹՎԱԿԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ**

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ենթակայության ուսումնական հիմնարկներում սահմանվում է կրթության վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1. Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝

ա) Գորիս քաղաքում ամսական 4.000 ՀՀ դրամ.

բ) Գյուղական բնակավայրերում ամսական 3.000 ՀՀ դրամ:

2. Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝

ա) երաժշտական ուսումնական հաստատություններում մեկ երեխայի համար ամսական 2.000 ՀՀ դրամ.

բ) շախմատի դպրոցում մեկ երեխայի համար ամսական 1.000 ՀՀ դրամ.

գ) արվեստի դպրոց մեկ երեխայի համար ամսական 1.100 ՀՀ դրամ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

25/12/2016

ՈՐՈՇՈՒՄ N 35-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը՝ կցվում է ծրագիրը:

Կողմ -11

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԼՈՒՆՑ ՌՈՒՍԱՄ

2. ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ


3. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԷՐԻԿ

4. ԱՐԶԱՆՅԱՆ ԼՅՈՎԱ


5. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ

6. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ


7. ԴՈԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ



8. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ



9. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ



10. ՈՍԿԱՆՅԱՆ ՈՍԿԱՆ



11. ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՎԱՋԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ

2016թ. դեկտեմբեր « 26 »
ք.Գորիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 թվականների

ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Վ. Ադունցի կողմից


Հաստատվել է՝ համայնքի ավագանու 25.12.2016թ թիվ 35-Ն որոշմամբ

ԳՈՐԻՍ 2016

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	5
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն	5
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը	7
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը	13
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները	17
2.5. Ձարգացման խոչընդոտներ և դժվարություններ	18
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն	19
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	20
3.1. Համայնքի զարգացման տեսլական	20
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ	25
4. ՀՀԶԾ ֆինանսավորում	41
5. ՀՀԶԾ մոնիթորինգ	41

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք



Համախմբվածությունը, ուժերի ու միջոցների մեկտեղումը հաջողության հասնելու գրավականներն են: 2016 թվականի հունիսի 17-ին ընդունված «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի համաձայն ստեղծված Գորիս խոշորացված համայնք նոր վարչատարածքային միավորը (Գորիս, Ակներ, Բարձրավան, Խնձորեսկ, Հարթաշեն, Ներքին Խնձորեսկ, Շուռնուխ, Որոտան, Վերիշեն և Քարահունջ) նոր հնարավորությունների, հարուստ ներուժի և միաժամանակ նոր մարտահրավերների ամբողջություն է: Եթե սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից բնակավայրերի անհամաչափությունները զգալի չեն,

ապա կենցաղի, հոգեբանության, բարքերի ու սովորույթների առումով նորաստեղծ համայնքը իսկական ներկայանակ է՝ մեկ ընդհանուր գծով՝ սյունեցու ամուր կամք և հարուստ մտավոր ներուժ:

Առկա ռազմավարություններում առաջ քաշված խնդիրները, զարգացման խոչընդոտները, նպատակներն ու հեռանկարները, առավելություններն ու հնարավորություններն այժմ արդեն տասնապատկվել են: Գորիս բազմաբնակավայր համայնքը այսուհետ շարժվում է նոր տեսլականի՝ նոր իղձերի, ավելի հավակնոտ նպատակների, ավելի բարեկեցիկ ապագայի ու արդիական թիրախների ճանապարհով:

Հինգ տարի անց Գորիս համայնքը կվերաճի սրբեղծագործական հանգույցի՝ շնորհիվ պայմանաշակութային ժառանգության վրա հիմնված զբոսաշրջության զարգացման և ՏՏ ոլորտում առկա հարուստ ներուժի օգտագործման: Ենթակառուցվածքների արդիականացումը, առողջ ապրելու համար անհրաժեշտ շրջակա միջավայրի ձևավորումը, գյուղատնտեսության զարգացման խթանումը կնպաստի բնակության և աշխատանքի բարենպաստ պայմանների ապահովմանը, նոր ներդրումների ներգրավմանը՝ ապահովելով կայուն հավասարակշռված զարգացում:

Գորիս համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը կլրացնի բոլոր ռազմավարական փաստաթղթերին՝ որպես մարդկային, բնական, ֆինանսական, տնտեսական ռեսուրսների գնահատման ու արդյունավետ օգտագործման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի և չափելի արդյունքների ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի շահառուն Գորիս համայնքի յուրաքանչյուր բնակիչն է՝ գործարարը, հասարակական կազմակերպության ներկայացուցիչը, գյուղատնտեսության, զբոսաշրջության, նորարական ոլորտում աշխատողը, դպրոցականն ու ուսանողը: Սա բնակչության բոլոր շերտերի և սոցիալական բոլոր խմբերի կարծիքների, մտահոգությունների և առաջարկությունների փաթեթ է: Իզուր չէ, որ զարգացման ծրագրի կազմման հիմքում դրվել է ինտեգրացված ու մասնակցային կառավարման մոդելը՝ որպես առավել արդյունավետ միջոց՝ հասնելու կայուն զարգացման՝ ի պատասխան սոցիալական, տնտեսական, բնապահպանական և մշակութային պահանջների իրական փոխազդեցությանը:

Լիահույս ենք, որ Գորիս համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը կծառայի որպես ներդրողների, միջազգային կազմակերպությունների, մասնավոր ոլորտի ներգրավման հզոր ազդակ՝ ի նպաստ Գորիս համայնքի կայուն հավասարակշիռ զարգացման:

Գորիս համայնքի ղեկավար՝


ՎԱՀԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս խոշորացված համայնքը ձևավորվել է 2016 թվականի հունիսի 17-ին ընդունված «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի համաձայն: Համայնքն ընդգրկում է թվով տասը բնակավայր՝ Գորիս, Ակներ, Բարձրավան, Խնձորեսկ, Հարթաշեն, Ներքին Խնձորեսկ, Շուռնուխ, Որոտան, Վերիշեն և Քարահունջ, և զբաղեցնում 33604,01 հա տարածք (տե՛ս Գծապատկեր 1.):

Գծապատկեր 1. Գորիս համայնքի վարչական տարածքը՝ ըստ առանձին բնակավայրերի, հա



ՀՀ ոստիկանության և անձնագրային ու վիզաների վարչության տրամադրած տվյալների համաձայն՝ 2016 թվականի սեպտեմբերի 5-ի դրությամբ Գորիս համայնքում բնակչության թիվը կազմել է 29721 մարդ (կանայք՝ 51%, տղամարդիկ՝ 49%), որի 72,5%-ը կազմում է Գորիս կենտրոնական բնակավայրի բնակչությունը (տե՛ս Աղյուսակ 1.):

Համայնքում փախստականի կարգավիճակ ունեն 15 մարդ, որից՝ Գորիս՝ 10, Խնծորեսկ՝ 2, Հարթաշեն, Վերիշեն, Քարահունջ՝ մեկական մարդ:

Աղյուսակ 1. Գորիս համայնքի ժողովրդագրական ցուցանիշները՝ ըստ առանձին բնակավայրերի, մարդ (2016թ. սեպտեմբերի 5-ի դրությամբ)

		Ընդամենը, համայնք	Գորիս	Ավեր	Քարծրական	Խնծորեսկ	Հարթաշեն	Ներքին Խնծորեսկ	Շուռնուխ	Որդոս	Վերիշեն	Քարահունջ
Մշտական	Ընդ ամեն ը	29721	21290	1102	134	2029	683	267	148	285	2096	1379
	Իգ.	15102	10973	530	68	1006	317	130	69	154	1071	671
	Ար.	14619	10317	572	66	1023	366	137	79	131	1025	708
Մինչև 1 տարեկան		193	150	4	0	7	4	3	0	2	11	12
1-2 տարեկան		262	89	26	4	37	16	10	2	3	49	26
3-4 տարեկան		310	126	31	0	46	17	6	2	13	57	37
5-6 տարեկան		494	276	26	5	65	17	7	6	8	63	46
7-10 տարեկան		1061	624	74	6	110	35	15	7	27	139	81
11-14 տարեկան		887	483	58	6	123	43	10	12	14	96	82
15-17 տարեկան		790	485	49	2	102	36	13	6	18	69	62
18-22 տարեկան		1712	1141	94	4	162	41	37	13	25	141	104
23-45 տարեկան		11505	8727	396	54	713	237	91	56	104	780	497
46-62 տարեկան		7376	5843	210	31	387	138	64	32	54	441	276
63 և ավելի տարեկան		4369	3491	133	21	277	98	10	11	16	257	155

2.2. Համայնքի սոցիալ փնտեսական իրավիճակը

Գորիս համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 772 մլն 136,5 հազ դրամ, սեփական եկամուտների բաժինը ընդհանուր եկամուտների մեջ՝ 20,3 %:

Գորիս համայնքում գործող գործատուների թվաքանակը կազմում է 380, որից՝ կազմակերպություններ՝ 210, անհատ ձեռնարկատեր՝ 170:

Գորիս համայնքն ընդգրկող վարչական տարածքում գործող կազմակերպությունները՝ 210, անհատ ձեռնարկատեր՝ 590:

Գորիս համայնքի հիմնական արդյունաբերական (արտադրական) ձեռնարկությունները, արդյունաբերական արտադրանքը, հիմնական սպառման շուկաները

- էլ. էներգիայի արտադրություն փոքր ՀԷԿ-երի միջոցով
- շինանյութերի արտադրություն, մասնավորապես, մետաղյա կոնստրուկցիաների («Գոր-Մետաղ» ՍՊԸ), սենդվիչների («Միկրո-շարժիչ» ԲԲԸ) արտադրություն
- գործվածքների (մանածագործական) արտադրություն
- քիմիական մանրաթելերի արտադրություն
- 3D տպիչների արտադրություն («ՕգմենթԱր» ՍՊԸ)
- սննդի, սննդամթերքի արտադրություն
- գովացուցիչ ըմպելիքների, գարեջրի արտադրություն
- կաթի, կաթնամթերքի արտադրություն
- էլ. սարքավորումների արտադրություն («Գամմա» ԲԲԸ)

Արտադրված արտադրանքը հիմնականում սպառվում է ներքին շուկայում՝ ՀՀ տարածքում, «Գամմա» ԲԲԸ արտադրանքն արտահանվում է ԵՏՄ երկրներ:

Համայնքի ծառայությունների, սպասարկման բնագավառի հիմնական ձեռնարկությունները և հիմնական ծառայությունները

- հյուրանոցային ծառայությունների կազմակերպում («Հելի» ՍՊԸ, «Խնձորեսկ տուր» ՍՊԸ, «Դիանա ԻՎՎ» ՍՊԸ, «Գոռ և Գոհար» ՍՊԸ, «Լարիսա Պողոսյան» ՍՊԸ և այլն)
- հանրային սննդի կազմակերպում (ոլորտում ներառված են 23 տնտեսավարող սուբյեկտներ)
- գրոսաշրջային տուրերի կազմակերպում
- փաստաթանական ծառայություններ
- խորհրդատվական ծառայություններ
- նոտարական և թարգմանչական ծառայություններ

Համայնքի գյուղատնտեսական արտադրանքի հիմնական ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 2-ում և 3-ում:

Աղյուսակ 2. Գորիս համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները ըստ բնակավայրերի (2016թ.)

h/h	Բնակավայրի անվանումը	Խոշոր եղջերավոր անասուն		Ռիս (գլուխ)	Թռչուն (թև)	Մեղու (փեթակ)	Խոզ (գլուխ)	Մսի արտադր. (տոննա)	Կաթի արտադր. (տոննա)	Անասնաբեր (տոննա)
		Ընդամենը (գլուխ)	Որից կով (գլուխ)							
1	Գորիս	2611	1628	3514	13050	2540	262	189	3663	2260
2	Խնձորեն	4720	2286	7270	12620	400	1340	492	5486	6000
3	Վերիշեն	1640	920	4367	4798	487	342	169	2208	2160
4	Ակներ	1131	543	619	2310	155	115	92	1303	2050
5	Ն. Խնձորեն	675	305	3501	1396	86	133	100	610	350
6	Հարթաշեն	1502	720	1055	3600	250	455	143	1620	4500
7	Բարձրավան	250	115	131	480	12	20	20	230	800
8	Քարահունջ	1076	453	1519	2407	616	357	122	1019	2400
9	Շուռնուխ	172	61	477	299	95	54	23	122	120
10	Որոտան	127	49	24	455	85	56	14	98	130
	ԸՆԴԱՄԵՆԸ	13904	7080	22477	41415	4726	3134	1364	16359	20770

Աղյուսակ 3. Գորիս համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները ըստ բնակավայրերի (2016թ.)

h/h	Բնակավայրի անվանումը	Հացահատիկ		Կարկոֆիլ		Բանջարեղեն		Պտուղ և հափաղկուղ	
		Ցանց (հա)	Համախառն բերքը (տոննա/)	Ցանց (հա)	Համախառն բերքը (տոննա)	Ցանց (հա)	Համախառն բերքը (տոննա)	Ցանց (հա)	Համախառն բերքը (տոննա)
1	Գորիս	931	2347	80	1520	32	470	53	533
2	Խնձորեն	1329	3547	23	437	14	214	51	126
3	Վերիշեն	55	144	61	1159	12	216	26	72
4	Ակներ	169	435	42	788	7	106	40	90
5	Ն. Խնձորեն	301	706	5	86	6	108	3	20
6	Հարթաշեն	585	1666	25	285	17	203	12	40
7	Բարձրավան	62	138	5	100	5	73	72	15
8	Քարահունջ	419	1051	25	418	8	143	76	640
9	Շուռնուխ	16	28	7	133	3	59	6	25
10	Որոտան	1	2	7	133	3	44	27	293
	ԸՆԴԱՄԵՆԸ	3868	10064	280	5059	800	1636	366	1854

Գորիս համայնքի անզուգական բնությունը, արժեքավոր պատմաճարտարապետական հուշարձանների առկայությունը, որոնցից հատկապես արժեքավոր են բազմաթիվ բնական ու արհեստական քարայրները և բնակելի տները, անկասկած, կարող են նպաստել տեղական ու օտարերկրյա զբոսաշրջության զարգացմանը:

Համաձայն ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկի միայն Գորիս քաղաքում հաշվառված է 157 անուն հուշարձան՝ բաղկացած 277 միավորից: Դրանցից 127-ը հանրապետական նշանակության են (Հուշարձանների ցանկը ըստ առանձին բնակավայրերի ներկայացված է Հավելված 1-ում):

Բարձրավանի Բղենո Նորավանքը, Ակների ամրոցն ու քարայր-կացարանը, Հարթաշենի բնակելի քարայրերը, Վերիշենի 4-5-րդ դդ. եկեղեցին, Քարահունջի բնակելի քարայրերն ու հնձանները համայնքում մշակութային տուրիզմի զարգացման հզոր կենտրոններ են, իսկ Խնձորեսկը, շնորհիվ զարգացող ենթակառուցվածքների, առավել մեծ հեռանկար ունի, հատկապես 2012թ. գործարկված կամուրջի շնորհիվ: Հին Խնձորեսկի երկու ձորափը (Ղանդունց նովն ու Ներքին թաղը) իրար միացնող իր տեսակի և չափի մեջ եզակի կախովի կամուրջը ձգվում է ավելի քան 160 մետր: Բարձրությունն ամենախոր տեղում 63 մետր է:

Դպրոցական, նախադպրոցական և արտադպրոցական կրթական
հաստատություններ, ԲՈՒՀ-եր

Աղյուսակ 4. Գորիս համայնքի դպրոցական հաստատություններում ընդգրկված աշակերտների թիվը

h/h	Բնակավայրը	Հաստատությունը	Քանի հոգու համար է նախատեսված	Ցուցակային թիվ
1.	Գորիս	Ա. Բակունցի անվան թիվ 1 ավագ դպրոց	900	779
2.	Գորիս	Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց	972	375
3.	Գորիս	Յ. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց	964	540
4.	Գորիս	Թիվ 4 ավագ դպրոց	300	292
5.	Գորիս	Թիվ 5 հիմնական դպրոց	200	209
6.	Գորիս	Սերո Խանգադյանի անվան թիվ 6 հիմնական դպրոց	1000	444
7.	Ակներ	Ակների միջնակարգ դպրոց	130	159
8.	Բարձրավան	Բարձրավանի միջնակարգ դպրոց	47	11
9.	Խնձորեսկ	Խնձորեսկի միջնակարգ դպրոց	536	276
10.	Հարթաշեն	Հարթաշենի միջնակարգ դպրոց	320	103
11.	Ներքին Խնձորեսկ	Ներքին Խնձորեսկի միջնակարգ դպրոց	50	27
12.	Շուռնուխ	Շուռնուխի միջնակարգ դպրոց	45	17

13.	Որոտան	Որոտանի միջնակարգ դպրոց	70	48
14.	Վերիշեն	Վերիշենի միջնակարգ դպրոց	1170	281
15.	Քարահունջ	Քարահունջի միջնակարգ դպրոց	400	177

Աղյուսակ 5. Գորիս համայնքի նախադպրոցական հաստատություններում ընդգրծված երեխաների թիվը և նախագծային հզորությունը

h/h	Բնակավայրը	Հաստատությունը	Նախագծային հզորություն	Ցուցակային թիվ
1.	Գորիս	Վ. Սարգսյանի անվան թիվ 1 ՆՈՒՀ	Ոչ տիպային հարմարեցված շենք է	142
2.	Գորիս	Թիվ 2 ՆՈՒՀ	200	231
3.	Գորիս	Թիվ 3 ՆՈՒՀ	150	86
4.	Գորիս	Թիվ 4 ՆՈՒՀ	120	56
5.	Գորիս	Թիվ 5 ՆՈՒՀ	200	85
6.	Գորիս	Թիվ 6 ՆՈՒՀ	350	97
7.	Գորիս	Թիվ 7 ՆՈՒՀ	360	80
8.	Խնձորեսկ	Խնձորեսկի ՆՈՒՀ	120	66
9.	Ներքին Խնձորեսկ	Ներքին Խնձորեսկի ՆՈՒՀ	Ոչ տիպային հարմարեցված շենք է	14
10.	Վերիշեն	Վերիշենի ՆՈՒՀ	100	85
11.	Քարահունջ	Քարահունջի ՆՈՒՀ	50	35

Աղյուսակ 6. Գորիս համայնքի արտադպրոցական հաստատություններում ընդգրկվածների թիվը

h/h	Բնակավայրը	Հաստատությունը	Քանի հոգու համար է նախատեսված	Ցուցակային թիվ
1.	Գորիս	Ա. Սաթյանի անվան երաժշտական դպրոց	200	130
2.	Գորիս	Շ. Ազնավուրի անվան երաժշտական դպրոց	200	102
3.	Գորիս	Գ. Պարոնյանի անվան արվեստի դպրոց	100	70
4.	Գորիս	Գեղագիտության ազգային կենտրոնի Գորիսի մասնաճյուղ	120	138
5.	Գորիս	Մանկապատանեկան մարզադպրոց	200	195
6.	Գորիս	Ա. Օրդյանի անվան շախմատի դպրոց	60	45
7.	Վերիշեն	Վերիշենի երաժշտական դպրոց	30	13
8.	Խնձորեսկ	Խնձորեսկի երաժշտական դպրոց	90	62

Աղյուսակ 7. Գորիս համայնքի ԲՈՒՀ-երում ընդգրկվածների թիվը

h/h	Քնակավայրը	Հաստատությունը	Քանի հոգու համար է նախատեսված	Ցուցակային թիվ
1	Գորիս	Գորիսի պետական համալսարան	1700	1321
2	Գորիս	Մանկավարժական քոլեջ	600	242
3	Գորիս	Գյուղատնտեսական քոլեջ	300	225
4	Գորիս	«Սյունիք» ինստիտուտ	450	104
6	Գորիս	Երևանի կինոյի և թատրոնի պետական ինստիտուտի Գ.Մ	45	20

Գորիս համայնքի առողջապահական հիմնարկներն ու հաստատությունները

Աղյուսակ 8. Գորիս համայնքի առողջապահական հաստատությունների տարեկան այցելուների և մահճակալների թիվը

h/h	Քնակավայրը	Հաստատությունը	Մահճակալների թիվ	Տարեկան այցելուների թիվ
1.	Գորիս	Գորիս բժշկական կենտրոն ՓԲԸ	110	5500
2.	Գորիս	Հայ-ֆրանսիական սրտաբանական կենտրոն	26	8000
3.	Գորիս	Արյան փոխներարկման կայան	0	330
4.	Գորիս	Հիգիենիկ համաճ. հսկողական տեսչություն	0	1000
4.	Ակներ	բուժկետ	0	1000
5.	Բարձրավան	բուժկետ	0	125
6.	Խնձորեսկ	Բուժ. ամբուլատորիա	0	2000
7.	Հարթաշեն	բուժկետ	0	670
8.	Ներքին Խնձորեսկ	բուժկետ	0	150
9.	Շուռնուխ	բուժկետ	0	120

10.	Որոտան	բուժկետ	0	250
11.	Վերիշեն	«Վերիշենի բուժամբուլատորիա» ՓԲԸ	0	2000
12.	Քարահունջ	բուժկետ	0	1300

Աղյուսակ 9. Գործադրկության և ըստ տնտեսության ոլորտների զբաղվածության նկարագիրը

h/h			թվաքանակը/մարդ
1.	Գրանցված գործազուրկների թվաքանակը	Ընդամենը	1660
		Արական	560
		Իգական	1100
2.	Համայնքում զբաղված բնակչության թվաքանակը	Ընդամենը	8416
3.	Զբաղված բնակչության թվաքանակն ըստ ոլորտների	3.1 Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն	3432
		3.2 Ձկնորսություն և ձկնաբուծություն	13
		3.3 Հանքագործական արդյունաբերություն	0
		3.4 Մշակող արդյունաբերություն, այդ թվում՝ գյուղ. հումքի մշակում	431
		3.5 Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	186
		3.6 Շինարարություն	390
		3.7 Առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում	659
		3.8 Գյուղատնտեսական ծառայությունների մատուցում	164
		3.9 Հյուրանոցային և ռեստորանային ծառայություններ	198
		3.10 Տրանսպորտ և կապ	396
		3.11 Տեղական ինքնակառավարում	346
		3.12 Կրթություն, այդ թվում՝ նախադպրոցական կրթություն	894
		3.13 Առողջապահություն և սոցիալական ծառայություն	325
		3.14 Կոմունալ, սոցիալական և անհատական ծառայություններ	196
		3.15 ՀՈԱԿ-ներում աշխատողներ	346
		3.16 Պետական մարմիններում	365
		3.17 Տեղական ինքնակառավարման մարմիններում	346
		3.18 Հասարակական միավորումներում	52

Գործադրկության մակարդակը Գորիս քաղաքային բնակավայրում կազմում է 16,5%:

Համայնքում **ընտանեկան նպաստի համակարգում փաստագրված տնային տնտեսությունների քանակը** 2016թ. նոյեմբերի 1-ի դրությամբ կազմում է 1095 տ/տ, այդ

թվում՝ Գորիս՝ 713, Ակներ՝ 58, Բարձրավան՝ 4, Խնձորեսկ՝ 91, Հարթաշեն՝ 20, Ներքին Խնձորեսկ՝ 11, Շուռնուխ՝ 6, Որոտան՝ 25, Վերիշեն՝ 78 և Քարահունջ՝ 89:

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

Աղյուսակ 10. Պետության կողմից գալիք հինգ տարիների համար նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները

h/h	Ծրագրի անվանումը	Ծրագրի նկարագիրը	Ազդեցությունը
ԳՈՐԻՍ			
1.	Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր (Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ)	Ժառանգության հանգույցի ռեզենդացիայի և զբոսաշրջային երթուղու մշակման շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալը. 1. Կենտրոնական զբոսայգու վերականգնում 2. Երիտասարդական զբոսայգու վերականգնում 3. Վարարակն գետի աջափնյա հատվածի վերակառուցում 4. Քաղաքի կենտրոնական մասի պատմաճարտարապետական միջավայրի վերականգնում	Ուղղակի ազդեցությունը Կենսապայմանների բարելավում՝ զբոսաշրջության անմիջական ազդեցության միջոցով (եկամուտներ և շահույթ զբոսաշրջության ոլորտից, ինչպես նաև ենթակառուցվածքների բարելավում) Երկրորդական ազդեցությունը Ոչ զբոսաշրջային ոլորտների զարգացում (շինարարական աշխատանքներում տեղական ներուժի ներգրավում, հյուրանոցների մատակարարող ֆերմերային տնտեսությունների զարգացում) Դինամիկ ազդեցությունը Տեղական տնտեսության աճ
ԱԿՆԵՐ			
2.	Խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում	Ներքին ցանցը կառուցվել է 60-ական թթ. և գտնվում է խախտու վիճակում: Այս ծրագրով կլուծվի այդ խնդիրը:	Բնակչության կողմից բողոքներ չեն լինի և մատակարարվող խմելու ջրի որակը կհամապատասխանի չափանիշներին
ՎԵՐԻՇԵՆ			
3.	Վերիշեն-Խոզնավար և Վերիշեն-Ակներ ճանապարհների ասֆալտապատում		
4.	Փողոցների և ճանապարհների բարեկարգում, նորոգում		
5.	Գետանցման փոքր կամրջի նորոգում, կոյուղու նորոգում		
6.	Միջնակարգ դպրոցի կապիտալ նորոգում		
7.	Խմելու ջրի ներքին ցանցի նորոգում		
ՈՐՈՏԱՆ			
8.	Կոյուղու վերանորոգում	Ապահովել սանիտարա-հիգիենիկ պայմանները	Կվերանա համաճարակի առաջացման ռիսկը, կպահպանվի մաքրությունը
9.	Ոռոգման համակարգի կառուցում	Կբարելավվի այգիների ջրամատակարարումը	Ոռոգման ջրի շնորհիվ կմշակվեն այգիները

10.	Աղբահանության կազմակերպում	Աղբահանության կայուն համակարգի ձևավորման արդյունքում ունենալ մաքուր և բարեկեցիկ համայնք	Կստեղծվեն սանիտարահիգիենիկ պայմաններ
11.	Բնակարանների տանիքների թիթեղների ձեռքբերում	Բնակելի շենքերը գտնվում են անմխիթար վիճակում	Կնպաստի շենքերի բարեկարգմանը և բնակչության ապրելակերպի բարելավմանը
12.	Ջրընդունիչների և ջրատարի կառուցում	ՀՏՀՀ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագիր	Բնակավայրում առաջնային կարևորության խնդրի լուծում
ՆԵՐՔԻՆ ԽՆՁՈՐԵՍԿ			
13.	Ճանապարհների և փողոցների վերանորոգում	Ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ՝ տարվա բոլոր եղանակներին, վերացնել փողոցների ջրափոսերը	Կբարելավվեն երթևեկության միջոցները, կաճի գյուղում բնակություն հաստատել ցանկացողների թիվը, ճանապարհները և փողոցները բարեկարգելուց հետո կաշխուժանա երթևեկությունը, կապը արտաքին աշխարհի հետ
14.	Փողոցներում գիշերային լուսավորության անցկացում	Ապահովել փողոցների գիշերային լուսավորությունը՝ նպաստելով բնակչության անվտանգությանը, կենսամակարդակի բարձրացմանը	Կստեղծվեն պայմաններ բնակչության անվտանգության համար
15.	Աղբահանության կազմակերպում	Աղբահանության կայուն համակարգի ձևավորման արդյունքում ունենալ մաքուր և բարեկեցիկ համայնք	Կբարելավվեն սանիտարահիգիենիկ պայմանները
16.	Արոտներում անասունների խմելու ջրի մատակարարման համակարգի սարքավորումների ձեռքբերում	Անասունների համար ապահովել անհրաժեշտ ջրաքանակ՝ նպաստելով նրանց մթերատվության բարձրացմանը	Կնպաստի անասունների մթերատվության բարձրացմանը
ԽՆՁՈՐԵՍԿ			
17.	Խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցում	ՀՏՀՀ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագիր	Բնակավայրում առաջնային կարևորության խնդրի լուծում
ՇՈՒՂՆՈՒՆ			
18.	Ջրամատակարարման համակարգի վերակառուցում	ՀՏՀՀ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագիր	Բնակավայրում առաջնային կարևորության խնդրի լուծում
ՔԱՐԱՀՈՒՆՔ			
19.	Խմելու ջրագծի վերանորոգում		
20.	Նոր թաղամասերի ճանապարհների բարեկարգում, ասֆալտապատում, մայրերի հիմնանորոգում		

Աղյուսակ 11. Միջհամայնքային, միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ և մասնավոր ընկերությունների կողմից իրականացվող ծրագրեր

h/h	Ծրագրի անվանումը	Ծրագրի նկարագիրը	Ակնկալվող արդյունքները	Ազդեցությունը
ԳՈՐԻՍ				
1.	Իսելացի քաղաքային լուծումներ՝ անցումային զարգացող երկրների համար	Միացյալ ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿԵՏՀ) և Ավստրիական միջազգային տնտեսական համագործակցության կազմակերպության (OIER)	Ենթակառուցվածքների արդիականացմանը, քաղաքային կառուցվածքների և շրջակա միջավայրի բարելավմանը նպատակաուղղված ռազմավարությունների մշակում	Բնական ռեսուրսների (հումքային, ռեկրեացիոն, գյուղատնտեսական) ներուժի ռացիոնալ օգտագործմամբ ճկուն ներդրումային քաղաքականության իրականացում և աշխատատեղերի ստեղծում
2.	Մաքուր դաշինք. մատչելի ծառայություններ Գորիս և Գորայք բազմաբնակավայր համայնքներին	ԵՄ ֆինանսավորում «Ուրբան» հիմնադրամ	Աղբահանության մեխանիզմների ներդրում, ռազմավարական փաստաթղթերի կազմում	Առողջ միջավայրի ձևավորում
3.	«Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնություն	Թիրախավորելով էներգաարդյունավետություները և գործարար ոլորտը՝ տեղական իշխանությունների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև համագործակցության խթանում ուժեղացված հաշվետվողականության, փորձի փոխանակման և տեղական զարգացման քաղաքականությունների ձեռքբերման և իրականացման համար արդյունավետ վարչական կարողությունների տեսանկյունից	Էներգաարդյունավետության բարձրացում, էներգիայի նորարարական աղբյուրների օգտագործում	Աշխատատեղերի ստեղծում և կայուն զարգացում
4.	Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություններ պատմական քաղաքներում (COMUS)	COMUS ծրագիրը կառուցված է Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության քաղաքականության գերակայությունների վրա, Արևելյան գործընկերության ծրագրի	Ինտեգրացված ու մասնակցային կառավարման մոդելի կիրառում՝ որպես արդյունավետ միջոց, հասնելու համար կայուն քաղաքաշինական վերածնման և	Սոցիալական ու տնտեսական զարգացման խթանում՝ ուժեղացնելով մշակութային ժառանգության ռեսուրսները

		համատեքստում՝ միտված Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ուկրաինայի և Բելառուսի հետ համագործակցային գործունեության աշխուժացմանը:	իրական փոխազդեցությանը	պատմական քաղաքներում
5.	Հայաստանի հեռավոր և փոքր համայնքներում կոշտ թափոնների կառավարման լուծումներ	Ասիական զարգացման բանկի, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, COWI A/S դանիական խորհրդատվական ընկերության համատեղ ուժերով և Ճապոնիայի կառավարության աղքատության նվազեցման հիմնադրամի ֆինանսավորմամբ		
ԱՎՆԵՐ				
6.	«Արոտների բարելավման ծրագիր»	15.0 հա-ի վրա կատարվել է քարերի մաքրում և խոտի սերմերի ցանքս	15.0 հա տարածքը կղառնա անասունների համար բարձրորակ արոտատեղ	Կիսթանի գյուղմթերքների աճին
ՎԵՐԻՇԵՆ				
7.	Մշակույթի տան նորոգում և մշակութային կյանքի աշխուժացում			
8.	Խոշոր եղջերավոր անասունների բարձր մթերատու ցեղատեսակների ներկրում			
9.	«Անասնապահության զարգացում Սյունիքի մարզում» ծրագրի շարունակություն			
10.	Աղբահանության կազմակերպում բնակավայրում և հանգստյան գոտիներում			
11.	Նախադպրոցական հաստատության տարածքի բարեկարգում և զբոսայգու կառուցում			
12.	«Գյուղի հրապարակը մեր բակն է» ծրագրի շրջանակներում լողավազանի և խաղահրապարակի կառուցում			
ՈՐՈՏԱՆ				
13.	Բնակավայրի գազաֆիկացում	Բարելավել բնակչության կենցաղային պայմանները	Բնակավայրը կապահովվի բնական գազով, կբարելավվեն սոցիալ-տնտեսական պայմանները	Կաճի բնակավայրում բնակություն հաստատողների թիվը
ՆԵՐՔԻՆ ԽՆՁՈՐԵՍԿ				
14.	Բնակավայրի գազաֆիկացում	Բարելավել բնակչության կենցաղային պայմանները	Բնակավայրը կապահովվի բնական գազով, կբարելավվեն սոցիալ-տնտեսական պայմանները	Կաճի բնակավայրում բնակություն հաստատողների թիվը
ՔԱՐԱՀՈՒՆՋ				
15.	Կաթի հավաքման կետի նորոգում, սարքավորումների ձեռքբերում			

Աղյուսակ 12. Տեղացի և արտասահմանյան բարերարների կողմից իրականացվող ծրագրերը

h/h	Ծրագրի անվանումը	Ծրագրի նկարագիրը	Ազդեցությունը
ՎԵՐԻՇԵՆ			
1.	Վերիշենի գերեզմանոցի ցանկապատում		
2.	Ծառատնկում, կանաչ գոտիների ստեղծում և պահպանում		
ՈՐՈՏԱՆ			
3.	Բնակավայրի վարչական ներկայացուցչի շենքի վերանորոգում	Բարելավել շենքային պայմանները, ստեղծել ավելի հարմարավետ պայմաններ	
4.	Մշակույթի տան կառուցում	Բարձրացնել բնակչության մշակութային-կրթական մակարդակը, լուծել զբաղվածության խնդիրը	Բնակչության ազատ ժամանակն ավելի հետաքրքիր ու արդյունավետ անցկացնել, ապահովել անհրաժեշտ պայմաններ բնակիչների հոգևոր զարգացման համար
ՆԵՐՔԻՆ ԽՆՁՈՐԵՍԿ			
5.	Բնակավայրի վարչական ներկայացուցչի նստավայրի վերանորոգում	Բարելավել շենքային պայմանները, ստեղծել ավելի հարմարավետ պայմաններ	
6.	Մշակույթի տան կառուցում	Բարձրացնել բնակչության մշակութային-կրթական մակարդակը, նրանց զբաղվածության խնդիրը	Բնակչության ազատ ժամանակն ավելի հետաքրքիր ու արդյունավետ անցկացնել, ապահովել անհրաժեշտ պայմաններ բնակիչների հոգևոր զարգացման համար

Աղյուսակ 13. Հարևան համայնքների հետ համատեղ գալիք հինգ տարիների համար նախատեսվող (շարունակվող) միջհամայնքային համագործակցության նպատակային ծրագրերն ու միջոցառումները

h/h	Ծրագրի անվանումը	Ծրագրի նկարագիրը	Ազդեցությունը	
ԳՈՐԻՍ				
1.	Մաքուր դաշինք. մատչելի ծառայություններ Գորիս և Գորայք բազմաբնակավայր համայնքներին	ԵՄ ֆինանսավորում «Ուրբան» հիմնադրամ	Աղքատության մեխանիզմների ներդրում, ռազմավարական փաստաթղթերի կազմում	Առողջ միջավայրի ձևավորում

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Համայնքի բյուջեի նախագիծը հաստատման փուլում է

2.5. Ձարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Գորիս համայնքի զարգացման ռազմավարության իրագործման ճանապարհին առկա են մի շարք խոչընդոտներ, որոնք «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով առանձնացված ոլորտներով դիտարկելու պարագայում ստանում ենք հետևյալ պատկերը.

Աղյուսակ 14. Գորիս համայնքի զարգացման հիմնական խոչընդոտների և առաջացնող պատճառները

h/h	Խնդիրները ու զարգացման խոչընդոտները	Առաջացնող պատճառները
1.	Համայնքի բարեկարգում, աղբահանություն, Վարարակն գետի սանիտարական վիճակ	Բաց մեքենաներով աղբահանություն
		Գլխավոր աղբավայրի տեղադիրք
		Գլխավոր աղբավայրի ցանկապատման անհրաժեշտություն
		Աղբ թափելու մշակույթի բացակայություն
		Աղբատար մեքենաների ու աղբամանների սակավություն
		Աղբահանության քաղաքականության բացակայություն
		Կոյուղու համակարգի արդիականացման անհրաժեշտություն
		Կոյուղու գլխավոր կոլեկտորի կառուցման անհրաժեշտություն
		Անօրինական աղբաթափում
		Հանրային տարածքների սակավություն
2.	Զբոսաշրջության դանդաղ զարգացում	Պատմամշակութային ռեսուրսներն ի ցույց դնելու անկարողություն
		Իմիջի, հեղինակության բարձրացում
		Սպասարկող ոլորտների թերզարգացվածություն (սննդի կետերի, ժամանցի վայրերի, հուշանվերների խանութների առկայություն)
		Խնձորեսկի կամրջի օրինակով նոր ենթակառուցվածքների ստեղծման անհրաժեշտություն
		Գիդերի, ոլորտի մասնագետների կարիք
		Լեզվի իմացություն
		Զբոսաշրջության սեզոնայնություն
		Արհեստագործության ակտիվացում, արհեստների ցուցադրություն
		Մշակութային միջոցառումների, փառատոնների սակավություն
		Տեղեկատվական ցուցանակների վահանակների անհրաժեշտություն
		Հասարակական տրանսպորտի համակարգի զարգացում
3.	Գյուղատնտեսության զարգացում	Ժամանակակից գյուղտեխնիկայի բացակայություն
		Նոր շուկաների բացահայտում, արտադրանքի առաջմղում
		Մեքենատրակտորային պարկի ստեղծում
		Նոր սերմերի, սորտերի և տնկիների ներմուծում

4.	Հասարակական տրանսպորտ, ճանապարհային ենթակառուցվածքների բացակայություն	Սերմնաբուծության զարգացում
		Ոռոգման ջուր՝ ցանցեր, ջրամբար
		Կաթի մթերման կետի անհրաժեշտություն
		Մսի իրացման դժվարություններ
		Անասնախմոցների անհրաժեշտություն
		Սպանդանոցի կարիք
		Նոր երթուղիների շահագործման անհրաժեշտություն
		Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում, ասֆալտապատում
		Նոր տրանսպորտային միջոցներ, միկրոավտոբուսներ
		Ճանապարհաշինական տեխնիկա
		Տրանսպորտային ցանցի, շարժման համակարգի անկատարություն
		Կանգառների կառուցում
		Փողոցների անվանումներով ցուցանակների տեղադրում
		Համայնքային ծառայությունների մասին բնակչության իրազեկվածության ցածր մակարդակ
		Մայթերի բարեկարգում

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւժՀՍ) վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
- Մեծ թվով բնական ու տեխնածին հուշարձաններ համայնքի սահմաններում և հարակից շրջաններում - Հարուստ նյութական և ոչ նյութական ժառանգություն - Ռազմավարական աշխարհագրական դիրք՝ որպես տրանսպորտային հանգույց - Բարենպաստ կլիմայական պայմաններ - Բազմաթիվ հյուրանոցների ու հյուրատների առկայություն - Գոյություն ունեցող տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների ցանցի առկայություն - Բազմաթիվ կրթական, առողջապահական, մշակութային հաստատությունների առկայություն - Տեղեկատվական տեխնոլոգիաներ, առկա ու նախատեսվող ինժեներական լաբորատորիաներ - Գյուղատնտեսության զարգացման նպաստավոր պայմաններ՝ բերրի հողեր, հասանելի մեծաքանակ հողային ռեսուրսներ, արոտավայրեր, - Խոտհարքներ	- Սակավ բյուջետային միջոցներ - Զբոսաշրջության սեզոնայնություն - Զբոսաշրջությանը սպասարկող ծառայությունների պակաս - Բրենդինգի և գովազդի անհրաժեշտություն - Աղբահանություն - Մաքրման կայանի բացակայություն - Հանրային տարածքների ցածր որակ - Քաղաքային միջավայրի կահավորանքի և դիզայնի տարրերի բացակայություն - Տեղական արտադրությունների պակաս - Գյուղական բնակավայրերում ենթակառուցվածքների թերզարգացվածություն - Հնացած գյուղտեխնիկա, տրանսպորտային պարկ - Ոռոգման համակարգեր

Հնարավորություններ	Սպառնալիքներ (վտանգներ)
• Տարածաշրջանային ու միջազգային զբոսաշրջային կենտրոն դառնալու ներուժ • Հանրային տարածքների բարեկարգում, հանգստի գոտիների կառուցում • Էկո-արտադրանքի արտադրություն՝ հատկապես գյուղական բնակավայրերում, ագրոբիզնեսի զարգացում • Բացառիկ տրամադրվածություն և քաղաքական կամք • Բազմաթիվ միջազգային ու տարածաշրջանային ծրագրերում ներգրավվածություն • Գյուղական բնակավայրերի հարուստ պոտենցիալի օգտագործում • Զբոսաշրջային ծրագրերի մշակում • Տեղական փառատոների կազմակերպում Այունյաց ավանդույթներ փառատոնի օրինակով • Զարգացման հնարավորությունների քաղաքի հատակագծային կառուցվածքում • Համայնքում գործող խոշոր արդյունաբերական ու ֆինանսական ձեռնարկություններ • Էներգիայի այլընտրանքային աղբյուրների օգտագործում • Պանրի, մեղրի, լոբու, թթի օղու, ավելուկի բարի համբավ՝ հատկապես գյուղական բնակավայրերում • Ակտիվ հասարակություն՝ մոտ 30 հասարակական կազմակերպություններ	• Աղբահանություն, աղբի տեսակավորման/վերամշակման բացակայություն • Վարարակն գետի սանիտարական վիճակ՝ կապված ապօրինի աղբաթափմամբ • Բնակչության նվազում (միգրացիա) • Գեոդինամիկ գործընթացների ակտիվացում • Ստորգետնյա ջրերի աղտոտվածություն, որակական փոփոխություն

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Գորիս համայնքը կվերաճի ստեղծագործական հանգույցի՝ շնորհիվ պատմամշակութային ժառանգության վրա հիմնված զբոսաշրջության զարգացման և ՏՏ ոլորտում առկա հարուստ ներուժի օգտագործման: Ենթակառուցվածքների արդիականացումը, առողջ ապրելու համար անհրաժեշտ շրջակա միջավայրի ձևավորումը, գյուղատնտեսության զարգացման խթանումը կնպաստի բնակության և աշխատանքի բարենպաստ պայմանների ապահովմանը, նոր ներդրումների ներգրավմանը՝ ապահովելով կայուն հավասարակշռված զարգացում:

Զարգացման տեսլականին հասնելու հեռահար նպատակը, անմիջական նպատակները, միջանկյալ արդյունքները և նպատակներին հասնելու համար անհրաժեշտ

գործողությունները սահմանվել են տրամաբանական հենքի մեթոդաբանությամբ և ներկայացված է Աղյուսակ 15.-ում:

